

**ԹԵՎՖԻԿ ՖԻԲՐԵԹԻ «ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՊՈԵՄԻ ԵՎ
ՆՐԱ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՊԵՏՐՈՍՅԱՆ Տ. Ռ.

Թուրք բանաստեղծ Թևֆիք Ֆիքրեթի (1867-1915) կյանքի ու ստեղծագործության հիմնահարցերը վաղուց ի վեր ինչպես թուրք, այնպես էլ արտասահմանյան ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են¹: Դեռևս պոետի կյանքի երիտասարդ ժամանակահատվածում նրա գործերի շուրջ ծավալված բուռն բանավեճերը որոշակի ընդմիջումներով շարունակվում են մինչև մեր օրերը, ինչն էլ ապացուցում է Ֆիքրեթի անհատականությունը: Ֆիքրեթին կամ փառաբանել ու երկրպագել են, կամ փորձել են նսեմացնել: Բանաստեղծի հանդեպ արտահայտած կարծիքներն ի մի բերելիս հանդիպում ենք հակասական մտքերի յուրահատուկ շղթայի: Ֆիքրեթին բնութագրում են որպես անհավատ, անկրոն կամ մարգարե, հայրենասեր կամ կոսմոպոլիտ, հանրությանը սիրող կամ հանրությանն ատող, այլասեր կամ եսասեր, «բարոյական» կամ «անբարոյական», «հրեշտակ» կամ «սատանա» և այլն²: Ֆիքրեթի գրական գործերը ևս ծայրահեղ քննադատության, նույնիսկ զրպարտության են արժանացել: Ֆիքրեթի ստեղծագործությունների մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում «Հին պատմություն» («Tarih-i Kadîm») պոեմը³: Այս

¹ Թևֆիք Ֆիքրեթի մասին սովորաձևվալ գրականությունից մասնավորապես տե՛ս İsmail Hikmet, **Tevfik Fikret**, İstanbul, 1932. Sabiha Sertel, **Tevfik Fikret**, İdeolojisi ve Felsefesi, İstanbul, 1946. Kenan Akyüz, **Tevfik Fikret**, Ankara, 1947. Mehmet Kaplan, **Tevfik Fikret ve Şiiri**, İstanbul, 1946. Mehmet Kaplan, **Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser**, İstanbul, 2007. Salih Keramet Nigâr, **Tevfik Fikret**, İnkılâp Şâirinin İzleri, İstanbul, 1942, Fuad Köprülü, **Edebiyat Araştırmaları**, Ankara, 1966, ss. 358-359. Refik Ahmet Sevensgil, **Eski Şiirimizin Ustaları**, İstanbul, 1964, ss. 310-323. **Алькаева Л. О., Бабаев А.**, Турецкая литература. Краткий очерк, М., 1967, с. 57-76; **Алькаева Л. О.**, Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., М., 1959, с. 86-94; **Гарбузова В. С.**, Поэты Турции XIX века, Л., 1970, с. 71-95; **Гордлевский В. А.**, Избранные сочинения, т. II, Язык и Литература, М., 1961, с. 419-422; **Фиш Р.**, Писатели Турции – книги и судьбы, М., 1963, с. 17-32; **Кямилиев Х.**, Общественные мотивы в турецкой поэзии (конец XIX – середина XX века), М., 1969, с. 21-45; **Սաֆարյան Ալ.**, Զիյա Գյոքալփը՝ թուրք կանանց իրավունքների մասին, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Սաֆրասյան Ռ.), հ. IV, Ե., 2006, էջ 34 և այլն: Խոսելով Թևֆիք Ֆիքրեթի «Հին պատմություն» պոեմի մասին Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը այն համարել է «աշխարհում իրականացվող բոլոր հեղափոխությունների և բարեփոխումների աղբյուրը». տե՛ս Galip Batu, **İsmail Tunc**, Türk Edebiyatı Tarihi, Tanzimattan Cumhuriyete, İstanbul, 1982, s. 623: Աթաթուրքի այս գնահատականը, անշուշտ, դարձել է Ֆիքրեթի ստեղծագործությունը թուրք ազգայնամոլ և կրոնամոլ քննադատներից պաշտպանող «վահան»:

² Mehmet Kaplan, **Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser**, İstanbul, 2007, s. 59.

³ Մանրամասն տե՛ս Salih Keramet Nigâr, *հշ.վ. աշխ.*, էջ 21-30: İsmail Parlatur, **Tevfik Fikret**, Ankara, 2004, ss. 73-74. Memet Fuat, **Tevfik Fikret**, Yaşamı, Düşünce Dünyası, Sanatçı, Kişiliği, Seçme Şiirleri, 4. Baskı, İstanbul, 2008, ss. 42-45.

ստեղծագործությունն հետաքրքիր է նախ և առաջ հեղինակի փիլիսոփայական հայացքների արտացոլման տեսանկյունից և արժևորվում է նաև նրանով, որ համամարդկային պատմությանն ու արժեքներին յուրօրինակ անդրադարձ է (պոեմը գրելիս Ֆիքրեթը նկատի է ունեցել կոնկրետ օսմանյան պատմությունն ու իսլամը)⁴:

Պոեմի ստեղծման համար շարժառիթ է հանդիսացել հետևյալ դրվագը. «Քուրբան բայրամի» ժամանակ Ֆիքրեթն իր կնոջ և որդու հետ նավակով անցնում է Բոսֆորով: Նրանց դեմ դուրս է գալիս մի մեծ նավ, որը տեղափոխում էր տոնի համար նախատեսված ոչխարներ: Այդ տեսարանի տպավորությամբ նա անմիջապես գրում է հետևյալ տողերը. (Din şehit ister, assüman-kurban. / Her zaman, her terafta kan, kan, kan.) (միշտ և ամենուրեք՝ արյուն, արյուն, արյուն)⁵: Կրոնը (հավատը) շեհիդներ⁶ է պահանջում, երկինքը՝ զոհեր: Անվանի թուրքագետ Վ. Գորդլևսկին գրել է, ««Հին պատմություն» ստեղծագործության մեջ Ֆիքրեթը խոստովանում է, որ մարդկությունը խաբված է»⁷: Ֆիքրեթի կենդանության օրոք պոեմը չի հրատարակվել: Տրամաբանական է, որ սուլթանական կառավարությունը չէր կարող հանդուրժել Ֆիքրեթի համարձակ, ազատասիրական հայացքները: Սակայն պոեմը հասարակության մեջ լայն տարածում է գտել ձեռագիր տեսքով: Պոեմն առաջին անգամ լույս է տեսել 1920 թ. Բաքվում, երկրորդ անգամ՝ 1923 թ. «Կարմիր Արևելք» («Kızıl Şark») պարբերականի⁸ 2-3-րդ համարում՝ որպես Ալի Աջար Սայիդզադեի «Թնֆիք Ֆիքրեթը և «Հին պատմությունը»» հոդվածի հավելված: Թուրքիայում պոեմը հրատարակվել է միայն 1928 թ.⁹: Տարակարծությունների տեղիք է տվել նաև պոեմի ստեղծման տարեթիվը: Թուրք խոշոր գիտնականներ Քենան Աքյուզը¹⁰ և Մեհմեթ Քափլանը¹¹ պոեմի ստեղծման տարեթիվը համարում են 1905 թ.: Պոեմը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջին մասում խոսվում է մարդկության պատմության, նրա անցյալի ու ապագայի մասին, իսկ երկրորդ մասում շոշափվում են կրոնին առնչվող հարցեր: Նկարագրելով մարդկության պատմությունը՝ մարդկանց հասցված ցավի ու չարիքի պատճառը Ֆիքրեթը համարում է պատերազմները, որոնք միլիոնավոր մարդկանց կյանք են խլել, ավերածությունների պատճառ դարձել. «Հերոսություն... Էությունը՝ արյուն, վայրագություն / Քաղաքներ ավերի՛ր (ոտնա-

⁴ Mehmet Kaplan, նշվ. աշխ., էջ 155:

⁵ Kenan Akyüz, Tefik Fikret, Ankara, 1947, s. 277.

⁶ Հանուն իսլամի նահատակներ:

⁷ Гордлевский Вл. А., Очерки по новой османской литературе, М., 1912, с. 120.

⁸ «Kızıl Şark» պարբերականը գիտահանրամատչելի, հասարակական-տնտեսական, գրական-գեղարվեստական հանդես է, որը լույս է տեսել 1922-1923 թթ. Մոսկվայում և Բաքվում:

⁹ Гарбузова В. С., նշվ. աշխ., էջ 83:

¹⁰ Kenan Akyüz, նշվ. աշխ., էջ 277:

¹¹ Mehmet Kaplan, Tefik Fikret ve Şiiri, s. 108.

տակ տուր), բանակներ ոչնչացրո՛ւ / Կտրի՛ր, պատո՛ւր, ոչնչացրո՛ւ, քա՛րշ տուր, ճգմի՛ր, այրի՛ր, ավերի՛ր / Ո՛չ «աման» (գրություն) իմացիր, ո՛չ «ախ» լսիր, ո՛չ «ափսոս» Հողը (վայրը), որտեղով դու կանցնես, թող լցվի մահով ու թախիծով / Թող տները դատարկվեն (մարեն), թող ընտանիքները հազիվ գոյատևեն»¹²:

Ֆիքրեթը քննադատում է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը, բռնությունն ու կեղեքումը՝ դրանք համարելով մարդկության արժանապատվության դեմ ուղղված գործողություններ: Հեղինակն ասելությամբ է խոսում արդուլիամիդյան վարչակարգի մասին՝ գրելով, որ երկրում տիրում է անարդարության, դաժանության, անօրինականության մթնոլորտ. «Ճշմարտությունը լեզվում (խոսքում) չէ, շրթունքներին է / Բարին ոտքերի տակ է, չարը՝ ձեռքերի վրա / Մի ճշմարտություն կա. կապանքների (շղթաների) ճրջմարտություն / Մի ճարտասանություն կա. սրի լեզու (ճարտասանություն) / Իրավունքն ուժեղինն է, այսինքն՝ չարինը / Ամենապարզ փիլիսոփայությունն է. չկեղեքողը կեղեքվում է (ով չի հալածում, ինքն է հալածվում) / Ամեն արժանապատվություն կեղծ է, ամեն երջանկություն թերի է (վիժվածք է) / Ամեն բանի սկիզբը, վերջը փուչ է (ոչինչ է)...»¹³: Ֆիքրեթը, մերկացնելով իր հայրենիքում տիրող իրավիճակը, միաժամանակ հավատում է ապագային, որն իր հետ լուսավոր օրեր է բերելու: Պոետը նկարագրում է ապագայի պատկերը՝ առաց պատերազմների, առանց նվաճողների ու կեղեքիչների, առանց ստրուկների ու տերերի, առանց չարագործության: Ըստ հեղինակի՝ մարդը պետք է ինքնին արժեք ներկայացնի. «Ո՛չ պատերազմող, ո՛չ պատերազմ ու զավթում / Ո՛չ խանգարում (անհանգստություն), ո՛չ սուլթանություն, ո՛չ ավագակություն / Ո՛չ բողոք, ո՛չ բռնություն, ո՛չ ճնշում (կեղեքում) / Ես ես եմ, դու էլ՝ դու. ո՛չ պարոն (տեր), ո՛չ ստրուկ»¹⁴: «Հին պատմության» մեջ Թնֆիք Ֆիքրեթը հանդես է գալիս դոգմաների դեմ և առաջ քաշում կասկածի դրույթը. «Կասկած... Ահա իմ մեղքը, ի՞նչ վնաս / Կասկածը դեպի լույս վազելն է»¹⁵: Հոգևորականությունը բացասական վերաբերմունք է արտահայտել պոեմի հանդեպ, իսկ հեղինակին անվանել «անաստված», «կրոնի թշնամի»¹⁶: Այդ ժամանակահատվածում մամուլում հայտնվեցին նաև Ֆիքրեթի դեմ ուղղված քննադատական հոդվածներ, որոնց մի մասը պատկանում էր Մեհմեթ Աքիֆի գրչին¹⁷: Նա հոդվածներում Ֆիքրեթին անվանում է մի մարդ, որը

¹² Tevfik Fikret, *Rübâb- ı Şikeste, Tarih-i kadîm, İstanbul, 2005, ss. 433-432.*

¹³ Tevfik Fikret, *նշվ. աշխ., էջ 431:*

¹⁴ Tevfik Fikret, *նշվ. աշխ., էջ 434:*

¹⁵ Tevfik Fikret, *նշվ. աշխ., էջ 438:*

¹⁶ Салимзянова Ф. А., О поэме Тевфика Фикрета «Тарихи кадим» (Краткие сообщения Института народов Азии, XLIV, Литературоведение и изучение памятников, М., 1961, с. 8).

¹⁷ Մեհմեթ Աքիֆը որոշ ժամանակ նույնիսկ համագործակցել է «Servet-i Fünun» («Գիտությունների հարստություն») հանդեսին, սակայն այնտեղից հեռացել է իր իսկ ցանկությամբ:

չունի գաղափար ու հայրենիք: Աքիֆը գրում է. «Այդ մարդը վիրավորել է իմ մարգարեին: Եթե նա վիրավորեր իմ հորը, ես կներեի նրան, բայց վիրավորել մարգարեին... Ես կմեռնեմ, բայց չեմ կարող ներել նրան այդ բանի համար»¹⁸:

1914 թ., ի պատասխան Մեհմեթ Աքիֆի, Ֆիքրեթը գրում է. «Հին պատմության հավելված» (“Tarih-i kadîm’e zeyl”) բանաստեղծությունը¹⁹: Այն ուղղված էր առհասարակ կրոնական պահպանողականների դեմ, որում հեղինակը փորձում է պատասխան տալ վերջիններիս, մասնավորապես Մեհմեթ Աքիֆին²⁰: Ուստի և բանաստեղծությունը հայտնի է նաև «Պատասխան» (“Bir cevâb”) , «Մոլլա Սըրաթ» (“Molla Sîrât”) անուններով: Ֆիքրեթը փորձում է ընդգծել զարգացման այն ուղին, որն իրեն բերել է նման համոզման: Այնուհետև նա հանգում է այն եզրակացության, որ այդ ամենը մոլորություն է, և մարդն ինքն է դիմում դրան, ինքն է ստեղծում իր համար պաշտամունքի առարկաներ. «Մարդկությունն այսպիսի մոլորություններ ունի / Պաշտամունքի առարկաներն ինքն է ստեղծում, ինքն է պաշտում»²¹: Գոյություն չունեցող այս անաստվածությանը Ֆիքրեթը հակադրում է իր կրոնը՝ կյանքի ու մարդու հանդեպ ունեցած հավատի և սիրո կրոնը. «Կյանքի կրոնն իմ կրոնն է / Հավատացյալ եմ. հավատում եմ կեցությանը (գոյությանը)»²²:

Ըստ խորհրդային թուրքագետ-գրականագետների, Ֆիքրեթի համոզմամբ՝ կյանքը հերքում է իսլամի ուսմունքը: Պոետը գրում է, որ չնայած իսլամը սովորեցնում է, որ Ալլահը հզոր է, ամենակարող և չունի իրեն հավասարը, սակայն իրականությունը հերքում է դա: Գոյություն ունեցող բոլոր կրոններն էլ իրենց արարչին ճանաչում են որպես անմահ և ամենակարող, և միաժամանակ բոլոր կրոններն էլ ժողովուրդներին համբերության և հնազանդության կոչեր են ա նում: Ֆիքրեթը հարցադրում է անում, թե ինչպես է բնությունը շարունակում հանդարտ մնալ, երբ կործանվում է նրա արարիչը: Ֆիքրեթի կասկածանքները հանգեցնում են կրոնի և Աստծու մերժմանը²³: Սա, անշուշտ, խիստ ծայրահեղ գնահատական է: Միաժամանակ ուսումնասիրողներին հետաքրքրել է այն հանգամանքը, թե ինչ ծագում ունի Ֆիքրեթը և ինչպիսի կրոնական միջավայրում է մեծացել: Որոշ աղբյուրներ նշում են, որ Ֆիքրեթի պապը (հոր կողմից) ծագումով չերքեզ է²⁴: Ռեզա Թեֆիքը գրում է, որ ինչպես Ֆիքրեթի պապը՝ Ահմեդ աղան, այնպես էլ հայրը՝ Հուսեյն Էֆենդին, կրոնասեր անձնավորություններ են եղել և «բարեպաշտ մուսուլ-

¹⁸ Kenan Akyüz, *նշվ. աշխ., էջ 130*:

¹⁹ Memet Fuat, *Istanbul, 2008, s.79*.

²⁰ *Սոնավել մանրամասն տե՛ս Sabiha Sertel, նշվ. աշխ., էջ 42-48*:

²¹ Tevfik Fikret, *Aynı eser, Tarih-i Kadîm’e Zeyl, s. 443*.

²² Tevfik Fikret, *նշվ. աշխ., էջ 444*:

²³ Салимзянова Ф. А., *նշվ. աշխ., էջ 9*:

²⁴ Гарбузова В. С., *նշվ. աշխ., էջ 73*:

մաններ»²⁵: Ֆիքրեթի մայրը՝ Հադիջե Ռեֆիան, հունական կրոնափոխ ընտանիքից է սերում: Նրա ծնողները դեվշիրմեի արդյունքում հունական Քիոս (Սաքքո) կղզուց տեղափոխվել են Ստամբուլ: Տասներկու տարեկանում Ֆիքրեթը կորցնում է մորը, որը ուխտագնացության ճանապարհին մահանում է խոլերայից, և Ֆիքրեթն անցնում է մորական տատի խնամքի տակ: Տատի ծայրահեղ կրոնամոլ լինելն էլ իր հերթին դրոշմ է թողնում պոետի սկզբնական շրջանի ստեղծագործությունների վրա: Հոգեբանական տեսանկյունից ուշադրության է արժանի Ֆիքրեթի որդու՝ Հալուքի կրոնափոխ լինելու և քրիստոնյա դառնալու հանգամանքը, ինչին ամենևին դեմ չի եղել Ֆիքրեթը²⁶:

Չհավատալով գերբնական ուժերին՝ հեղինակը փորձում է ապացուցել, որ չարի ու բարու աղբյուրները պետք է փնտրել ոչ թե Աստծու, այլ մարդու մեջ: Ֆիքրեթն առաջ է քաշում կեցության փիլիսոփայության ճշմարտացիությունը. «Ճշմարիտ կրոնը, իմ կարծիքով, այսօր կյանքի կրոնն է»²⁷:

О ПОЭМЕ ТЕВФИКА ФИКРЕТА “СТАРАЯ ИСТОРИЯ” И ЕЕ ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ

ПЕТРОСЯН Т. Р.

Резюме

Жизнь и творчество турецкого поэта Тевфика Фикрета (1867-1915) давно находятся в центре внимания как турецких, так и зарубежных исследователей. В творчестве Фикрета особое место занимает поэма “Старая история” (“Tarih-i Kadim”) , представляющая интерес в плане отражения философских взглядов поэта. Фикрет выступает с критикой тирании и насилия, царящих в Османской империи и ущемляющих человеческое достоинство. При этом его поэзия проникнута верой в будущее. В качестве критерия философии жизни он выдвигал мысль о том, что “Самая правильная религия, на мой взгляд, это религия жизни”.

²⁵ Ֆիքրեթի ընտանիքի, նախնիների մասին առավել մանրամասն տե՛ս Rıza Tevfik, Tevfik Fikret. Hayatı-Sanati-Şahsiyeti, İstanbul, 1945, ss. 5-9.

²⁶ «Միլլիյեթ» թերթը 1966 թ. 19-22-րդ համարներում տպագրում է Հալուքի նամակները, որոնցից մեկում Հալուքը գրում է, որ իր կրոնական հայացքներում եղած փոփոխություններին հայրը չի առարկել: Հալուքը գրում է. «Կրոնական հայացքներիս փոփոխության մասին հայրս գիտեր, մենք խոսել էինք դրա մասին: Նա շատ պարզ էր մտածում այս հարցի շուրջ և ցանկացավ, որ ես ինքս իմ որոշումը կայացնեմ: Ի տարբերություն հորս՝ մայրս ամենևին էլ զոհ չմնաց, մուսուլման պապիկս (մորս հայրը) հուսախաբ եղավ», Millyeti, 22 Haziran, 1966:

²⁷ Tevfik Fikret, նշվ. աշխ., էջ 444:
Լրաբեր 3-18